ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՊՄԳ) ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-2.3.3.ա

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Ծրագիրն ունի 4 բաղադրիչ՝ (i) Բաղադրիչ 1: Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում (արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում), (ii) Բաղադրիչ 2: Ներդրումների և արտահանման խթանում, (iii) Բաղադրիչ 3: Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում և (iv) Բաղադրիչ 4: Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում:

Ծրագրի Բաղադրիչ 2-ի երեք ենթաբաղադրիչների շրջանակներում Բաղադրիչ 2.3-ի («Հետազոտությունների, հմտությունների և կլաստերների զարգացումը խթանելու նպատակով պետական-մասնավոր փոխգործակցություններ (ՊՄԳ/ PPP-ներ)») նպատակն է. (i) աջակցել արտահանման պոտենցիալ ունեցող տեղական ընկերություններին՝ արագացնելու համար այս ոլորտների զարգացումը, (ii) ուժեղացնել արդյունավետություն ապահովող, բարձր ավելացված արժեք ունեցող առկա օտարերկրյա ուղղակի ներդրումների իմաստով հարաբերությունները, ինչպես նաև խթանել նոր օտարերկրյա ուղղակի ներդրումների համար պոտենցիալը, ինչպես նաև (iii) խթանել արդյունաբերություն-ակադեմիա համագործակցությանը:

Ենթաբաղադրիչ 2.3-ը կիրականացվի երկու ՊՄԳ ծրագրերի միջոցով. (i) Կլաստերների զարգացման ՊՄԳ-ներ և (ii) Հետազոտության և հմտությունների զարգացման ՊՄԳ-ներ:

ՊՄԳ ծրագրերի համար Իրականացնող գործակալությունները հանդիսանում են «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը» (ՁԻՀ), որը պատասխանատու է այն ՊՄԳ -ների համար, որոնք ներառում են բարձր տեխնոլոգիաների և ճարտարագիտական ոլորտները, ինչպես նաև «Հայաստանի զարգացման հիմնադրամը» (ՀԶՀ), որը պատասխանատու է մյուս ոլորտները ներառող ՊՄԳ-ների համար:

Սույն հանձնարարականի նպատակն է ժամանակին և մասնագիտական աջակցություն տրամադրել ՀԶՀ-ին ՝ ապահովելու համար ՊՄԳ ծրագրերի հաջողակ իրականացումը, այդ թվում նաև նախագծումը և համակարգումը:

Հանձնարարականի տևողությունը մեկ տարի է՝ երկարացման հնարավորությամբ:

Ուստի Հայաստանի Զարգացման Հիմնադրամը և ՀՀ ֆինանսների նախարարության "Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն" ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս ունեն համապատասխան որակավորում և փորձ վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Որակավորման պահանջներ

Հանձնարարականի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որը պետք է ունենա՝

- Բիզնեսի կառավարման կամ տնտեսագետի և/կամ հարակից մասնագիտացումների դիպլոմ (Մագիստրոսի աստիճանը կդիտարկվի որպես առավելություն):
- Մասնավոր ոլորտում բիզնեսի զարգացման ոլորտում աշխատելու առնվազն 5 տարվա փորձ՝ կամ որպես քաղաքականություն մշակող, խորհրդատու կամ հարակից բիզնես ոլորտում:
- ՊՄԳ ծրագրերի մշակման և իրականացման փորձագիտություն (հաջողությամբ իրականացված ՊՄԳ ծրագրերի փորձ տարբեր ոլորտներում՝ կնքված ֆինանսավորման համաձայնագրերով):
- Արդունավետության ապահովման օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին գիտելիքներ և ընկալում:
- Մասնավոր և հանրային հատվածի հետ համագործակցության ապացուցելի փորձ (կլաստերների ձևավորման վերաբերյալ գիտելիքները և փորձը կդիտարկվեն որպես առավելություն):
- Արդյունաբերություն-ակադեմիա համագործակցային ծրագրի կառավարման ապացուցելի փորձ:
- Բանակցությունների և պլանավորման գերազանց հմտություններ:
- Կոնցեպտուալ և վերլուծական ուժեղ կարողություններ:
- Նորարական և ռազմավարական մոտեցմամբ մտածելու և գործելու կարողություն, որը կհանգեցնի փոփոխության:
- Ներանձնային և թիմային աշխատանքի գերազանց հմտություններ և ճկուն և զգայուն լինելու կարողություն բոլոր այն իրավիճակներում, երբ դա պահանջվում է:
- Հայաստանի «Արտահանմամբ առաջնորդվող արդյունաբերական քաղաքականության» շրջանակի և այդ շրջանակում բացահայտված հիմնական ոլորտների ընկալումը կդիտարկվի որպես առավելություն:

- Համաշխարհային Բանկի կանոնակարգերի և քաղաքականությունների մասին գիտելիքները և ընկալումը կդիտարկվեն որպես առավելություն:
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցվելու գերազանց հմտություններ:
- Տեխնիկական քննարկումները հեշտացնելու և սեղմ ժամկետներում անգլերեն լեզվով հաշվետվությունները գրելու կարողություն:
- Համակարգչային գիտելիքներ:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի «Ուղեցույցի՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2011 թ. հունվարին հաստատված «Համաշխարհային բանկի Վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի ու դրամաշնորհների շրջանակում խորհրդատուների ընտրության եւ վարձելու ուղեցույցներ», շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. հունիսի 23-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am